ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

**20.12.2023թ.**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի Պրն Ա. Սիմոնյան,**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածների 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ազգային ժողովի քննարկման եմ ներկայացնում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ): Հիմնական զեկուցող՝ Լիլիթ Գալստյան:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝ օրենքի նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը, գործող օրենքում փոփոխվող և լրացվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝**

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի.

1) 1-ին հինգ պարբերությունները վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հուշարձանների դասակարգումն իրականացնում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

2. Հուշարձաններն ըստ արժևորման չափանիշների դասակարգվում են համամարդկային, հանրապետական և տեղական նշանակության:

ա) Համամարդկային նշանակության կարգին են դասվում հայ ժողովրդի պատմության և մշակույթի այն բարձրարժեք հուշարձանները, որոնք իրենց բացառիկությամբ համընդհանուր քաղաքակրթական արժեք ունեն և ընդգրկված են կամ սահմանված կարգով կարող են ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:

բ) Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի բարձրարժեք, հնագույն, տիպական հուշարձանները:

գ) Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, նրա առանձնահատկությունները բնութագրող, գեղարվեստական, ինքնատիպ, պատմական կամ հնագիտական նշանակության ունեցող հուշարձանները:»:

2) 6-րդ պարբերությունում «Հուշարձանները» բառից առաջ ավելացնել «3.» թիվը:

***Հոդված 2.*** Օրենքի 7-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. **Հուշարձանների օգտագործման արգելումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական, ազգային խտրականության և ռազմական նպատակներով**

1. Արգելվում է հուշարձանների օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության նպատակներով:

2. Արգելվում է զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ հուշարձանների, դրանց անմիջական շրջակայքի և պահպանության գոտու օգտագործումն ու վերափոխումն այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:»

***Հոդված 3.*** Օրենքի 8-րդ հոդվածում.

դ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

***Հոդված 4.*** Օրենքի 9-րդ հոդվածում.

1) բ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

2) ժզ) կետում «վերականգնման,» բառից հետո լրացնել «տեղափոխման, փոփոխման,» բառերը:

***Հոդված 5.*** Օրենքի 41-րդ հոդվածի վերնագրում և ամբողջ հոդվածում «զբոսաշրջիկություն» բառը փոխարինել «զբոսաշրջություն» բառով:

***Հոդված 6.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է գործող օրենքում առկա որոշ բացթողումներ լրացնելու, ինչպես նաև մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ օրենսդրական ամրագրում ունենալու անհրաժեշտությամբ:

1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**.

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 1998-ին: Անցնող ժամանակահատվածում այն լրամշակվել է, կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ:

Օրենքի 1.1 հոդվածում (01.03.23 ՀՕ-38-Ն) սահմանվել են հուշարձանների պահպանության և օգտագործման ոլորտի հիմնական հասկացությունները, այդ թվում՝ «**համամարդկային նշանակության հուշարձան**» հասկացությունը, որը սակայն Օրենքի հետագա հոդվածներում չի գործածվել, չի արտացոլվել նաև Օրենքի 6-րդ՝ «Հուշարձանների դասակարգումը» հոդվածում:

Մշակույթի ոլորտում ՀՀ-ն վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 6 կոնվենցիա, կոնվենցիաներին կից 3 արձանագրություն և 1 պայմանագիր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը միացել է «Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պահպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա), դրա առաջին (1993 թ.) և երկրորդ (2006 թ.) արձանագրություններին: Կոնվենցիան և նրա երկու արձանագրությունները պարտավորեցնում են կողմերին «հարգել իրենց և մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի

նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն»:

Կոնվենցիան ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով ենթակա է պարտադիր կատարման և ուղղված է ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի դրույթի կիրառմանը, այն է՝ «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»:

Կոնվենցիայի անդամակցությունը պարտավորություն է սահմանում նաև օրենսդրական մակարդակում վերջինիս կիրառման և արտացոլման համար, սակայն ոլորտային Օրենքում այն արտացոլված չէ:

Օրենքի՝ Կառավարության լիազորությունների շարքում (Հոդված 8) ամրագրված չէ հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը հաստատելու, իսկ լիազոր մարմնի իրավասություններում՝ (Հոդված 9) վերոհիշյալ կարգը մշակելու լիազորությունը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**.

ա) Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք Օրենքի 6-րդ՝ «Հուշարձանների դասակարգումը» հոդվածում կատարել մասնակի խմբագրում և ըստ արժևորման չափանիշի դասակարգման մեջ լրացնել **համամարդկային նշանակության հուշարձանների** դասակարգումը:

բ) Կոնվենցիայի և նրա արձանագրության դրույթին համապատասխան վերաշարադրվել է Օրենքի 7-րդ հոդվածը: Մասնավորապես, 7-րդ հոդվածի վերնագրում հուշարձանների օգտագործման արգելումների մեջ լրացվել է «ռազմական նպատակներով» օգտագործելու արգելանքը: Հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով. «Զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ արգելվում է հուշարձանների, դրանց անմիջական շրջակայքի և պահպանական գոտու օգտագործումն ու վերափոխումն այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:»

գ) Հոդված 8-ի (դ) կետում, կառավարության իրավասությունների շարքում ամրագրվել է հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգի հաստատումը, իսկ լիազոր մարմնի իրավասություններում (Հոդված 9)՝ համապատասխան կարգի մշակումը:

2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**.

Նախագիծը միտված է մշակութային արժեքների պահպանության գործընթացի շարունակականությանը, պատմամշակութային անշարժ ժառանգության օրենսդրության կատարելագործմանը, մշակութային արժեքների պահպանությանն ուղղված հնարավոր ռիսկերը նվազեցնելուն և կանխարգելելուն:

Այն մասնակիորեն կհաղթահարի ՀՀ միջազգային և ներազգային պարտականությունները՝ գործող Օրենքը որոշակիորեն համապատասխանեցնելով Կոնվենցիայի պահանջներին:

Նախագիծը որոշ հստակություն կմտցնի կառավարության և լիազոր մարմնի իրավասություններում:

3.**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**.

Նախագիծը համահունչ է ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թթ. ռազմավարությանը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագրին:

**4.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված կազմակերպությունները և անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանի կողմից: Նախաձեռնությանը տեղեկատվական և փորձագիտական աջակցություն են ցուցաբերել Հայաստանի ճարտարապետների պալատը և Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեն (ԻԿՕՄՕՍ):

Օրենքի նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է հուշարձանների վերաբերյալ միջազգային փորձը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 6. Հուշարձանների դասակարգումը

~~Հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:~~

~~Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները:~~

~~Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները:~~

~~Հուշարձանների դասակարգումը կատարում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:~~

~~Պատմամշակութային բացառիկ արժեք ունեցող հուշարձանները միջազգային մակարդակով սահմանված չափանիշներով կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում:~~

1. Հուշարձանների դասակարգումն իրականացնում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

2. Հուշարձաններն ըստ արժևորման չափանիշների դասակարգվում են համամարդկային, հանրապետական և տեղական նշանակության:

ա) Համամարդկային նշանակության կարգին են դասվում հայ ժողովրդի պատմության և մշակույթի այն բարձրարժեք հուշարձանները, որոնք իրենց բացառիկությամբ համընդկրկուն քաղաքակրթական արժեք ունեն և ընդգրկված են կամ սահմանված կարգով կարող են ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:

բ) Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի բարձրարժեք, հնագույն, տիպական հուշարձանները:

գ) Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, նրա առանձնահատկությունները բնութագրող, գեղարվեստական, ինքնատիպ, պատմական կամ հնագիտական նշանակության ունեցող հուշարձանները:

3. Հուշարձանները դասակարգվում են նաև ըստ բնույթի՝

ա) հնագիտական՝ քարեդարյան կայաններ, քարայր-կացարաններ, հնագույն և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, պետական գերեզմանատներ, մեգալիթյան կոթողներ, ժայռապատկերներ, վիմագրական հուշարձաններ, հնագիտական մշակութային շերտեր.

բ) պատմական՝ պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, պետական գերեզմանատներ.

գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատման հատվածներ, բնակելի, պալատական, պաշտամունքային, հասարակական, արտադրական և ճարտարագիտական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ.

դ) մոնումենտալ արվեստի՝ մոնումենտալ քանդակագործության, գեղանկարչության և դեկորատիվ արվեստի նմուշներ:

*(6-րդ հոդվածը փոփ. 29.04.15 ՀՕ-30-Ն)*

~~Հոդված 7. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության արգելումը~~

-

~~Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում արգելվում է քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը:~~

**Յոդված 7. Յուշարձանների օգտագործման արգելումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական, ազգային խտրականության ւ ռազմական նպատակներով**

1. Արգելվում է հուշարձանների օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության նպատակներով:

2. Արգելվում է զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ հուշարձանների, դրանց անմիջական շրջակայքի և պահպանության գոտու օգտագործումն ու վերափոխումն այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:

Հոդված 8. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

*(վերնագիրը փոփ. 01.03.23 ՀՕ-38-Ն)*

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը.

բ) հաստատում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի հանրապետական և մարզային պետական ծրագրերը.

գ) ապահովում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին.

դ) հաստատում է անշարժ հուշարձանների պետական ցուցակները, դրանց հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման , տեղափոխման, փոփոխման և օգտագործման կարգը.

դ1) հաստատում է պետական սեփականություն համարվող հուշարձանների գույքային իրավունքների պետական գրանցման կարգը.

ե) ստեղծում է պատմամշակութային ու բնապատմական արգելոցներ, արգելոց-թանգարաններ, հնագիտական պարկեր և հաստատում դրանց կանոնադրությունները.

զ) միջազգային նորմերի սահմաններում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանման, ամրակայման, նորոգման, վերականգնման և քարոզչական միջոցառումների իրականացմանը.

է) թույլտվություն է տալիս հանրապետական նշանակության հուշարձանները տեղափոխելու և փոփոխելու համար.

է1) հաստատում է հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները.

ը) իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

*(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.03.23 ՀՕ-38-Ն)*

*(01.03.23 ՀՕ-38-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)*

### Հոդված 9. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում լիազորված մարմնի իրավասությունները

*(վերնագիրը փոփ. 01.03.23 ՀՕ-38-Ն)*

Լիազորված մարմինը՝

ա) մասնակցում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում պետական ծրագրերի, որոշումների նախագծեր, հաստատումից հետո կազմակերպում և վերահսկում է դրանց իրականացումը.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման և օգտագործման գիտամեթոդական կարգը.

գ) պետական վերահսկողություն է ապահովում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

դ) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական սեփականություն համարվող և չօգտագործվող հուշարձանների տնօրինումը, կատարում դրանց ամրակայման, վերականգնման և բարեկարգման աշխատանքները.

ե) գրանցում և վերահսկում է հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի և օգտագործման ձևի փոփոխումները.

զ) միջազգային նորմերի սահմաններում հաշվառում և ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական հուշարձանները, նպաստում դրանց պահպանմանը.

է) ստեղծում է պատմամշակութային արժեքների գիտատեղեկատու շտեմարան, հրատարակում կատալոգներ, ուսումնական, գիտահետազոտական, ճանաչողական նպատակներով ապահովում է հուշարձանների և դրանց վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.

է1) հաստատում է հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձևը.

է2) հաստատում է հուշարձանների պահպանական պարտավորագրի ձևը.

ը) վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրը).

թ) կազմում և սահմանված կարգով հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը ու սահմանում դրանց պահպանության ռեժիմը.

ժ) առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պատմամշակութային արգելոց ստեղծելու վերաբերյալ.

ժա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համաձայնություն կամ մասնագիտական եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատակագծման, կառուցապատման, ինչպես նաև հուշարձան համարվող առանձին շինությունների և համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ, դրանց իրականացման ընթացքում վերահսկում է հուշարձանների անվթարության ապահովումը.

ժբ) թույլտվություն է տալիս հուշարձանների հետախուզման և պեղման աշխատանքների համար, գրանցում դրանք և վերահսկում դրանց կատարման ընթացքը.

ժզ) արգելում կամ դադարեցնում է հուշարձանի պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման, ինչպես նաև շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.

ժդ) նպաստում է ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացմանը.

ժե) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

*(9-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.03.23 ՀՕ-38-Ն)*

*(01.03.23 ՀՕ-38-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)*

### Հոդված 41. Հուշարձանների օգտագործումը գովազդային և զբոսաշրջիկության նպատակներով

Հուշարձանները կամ դրանց ֆոտոպատկերները, տեսապատկերները կամ գծապատկերները գովազդային նպատակով որպես խորհրդանիշ, պիտակ, հուշանվերների և այլ ապրանքների արտադրության համար օգտագործելը կատարվում է սեփականատիրոջ համաձայնությամբ:

Հուշարձանները զբոսաշրջիկության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջիկային կազմակերպությունները համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ:

Նշված նպատակներով հուշարձանների օգտագործման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: